ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

№ 5 - Լ

«12» 04 2023 թ. ք. Երևան

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՀԵՐԹԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի № 17/43 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասով, Ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 5-Լ հրամանով հաստատված Ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) կանոնադրության 22-րդ կետի 4-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՓԾ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին՝

1) ՆԳՆ ՓԾ ստորաբաժանումներում շուրջօրյա հերթապահություն իրականացնող ուժերի և միջոցների ամփոփագիրը (այսուհետ՝ ամփոփագիր) ՆԳՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն (այսուհետ՝ ՃԿԱԿ) ներկայացնել յուրաքանչյուր օր՝ մինչև ժամը 09:40-ը,

2) ենթակա ստորաբաժանումներում շուրջօրյա հերթապահություն իրականացնող ավտոմեքենաների խափանումների դեպքում՝

ա. անհապաղ տեղեկացնել ՓԾ թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության (այսուհետ՝ ԹՆԱՎ) պետին՝ նշելով անսարքության բնույթը,

բ. սպասարկման տարածքներում արտակարգ դեպքերի արձագանքման անընդհատությունն ապահովելու նպատակով, մինչև խափանված ավտոմեքենայի վերանորոգումն ու մարտական հաշվարկի դնելը՝ զեկուցել ըստ վերադասության և անհրաժեշտության դեպքում, ենթակա ստորաբաժանումների շուրջօրյա հերթապահություն իրականացնող այլ ավտոմեքենաների հաշվին կազմակերպել ավտոմեքենայի ժամանակավոր տեղափոխումը՝ այդ մասին հաղորդելով ՆԳՆ ՓԾ ՃԿԱԿ, ՆԳՆ ՓԾ ԹՆԱՎ և ՆԳՆ ՓԾ փրկարարական ուժերի վարչություն (այսուհետ՝ ՓՈՒՎ),

3) ամենօրյա հետևողական աշխատանքներ տանել ենթակա ստորաբաժանումների շուրջօրյա հերթապահություն իրականացնող ավտոմեքենաների մարտունակության ապահովման ուղղությամբ:

2. ՓԾ ԹՆԱՎ պետին՝ շուրջօրյա հերթապահության ընթացքում արձանագրված անսարք ավտոմեքենաների մասին զեկուցել ՆԳՆ ՓԾ ԹՆԱՎ գործունեությունը համակարգող ՆԳՆ ՓԾ տնօրենի տեղակալին և անհապաղ միջոցներ ձեռնարկել դրանց անսարքությունը վերացնելու և մարտական հաշվարկի դնելու ուղղությամբ:

3. ՓԾ ՃԿԱԿ պետին՝ սույն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով ստացված տեղեկատվությունն ամփոփել և համակարգված ամփոփագիրը յուրաքանչյուր օր մինչև ժամը 10:00-ը փոխանցել ՆԳՆ ՓԾ ՓՈՒՎ:

4. ՓԾ ՓՈՒՎ պետին՝ սույն հրամանի 3-րդ կետում նշված ամփոփագիրը ստանալուց հետո՝ ուսումնասիրել այն և մինչև ժամը 10:30-ը ներկայացնել ՆԳՆ ՓԾ տնօրեն-ներքին գործերի նախարարի տեղակալին:

5. Ուժը կորցրած ճանաչել՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրենի 2016 թվականի հունվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության ստորաբաժանումներում մարտական հաշվարկի դրված հրշեջ-փրկարարական ավտոմեքենաների մարտունակության ապահովման մասին» № 17/43 հրամանը:

6. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Փ/Ծ ԳՆԴԱՊԵՏ

Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ 12.04.2023թ.

Կ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ